# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2025թ. թիվ 365-Ա

ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն թիվ ՎԴ/13595/05/21 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի նոյեմբերի 9-ի վճռի, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թվականի օգոստոսի 2-ի որոշման և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 884-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝

1) Հայկանուշ Փաշոյի Մարգարյանին հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վճարել միջին աշխատավարձ՝ 6346734 (վեց միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ՝ սկսած 2021 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 6-ը,

2) վճարել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով հարկերը,

3) Հայկանուշ Փաշոյի Մարգարյանին վճարել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար,

4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005016010 հաշվեհամարին վճարել 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար,

5) սույն որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված գումարները փոխանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի 900233844019 դեպոզիտ հաշվին,

6) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնին փոխանցել սույն որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված գումարների 5 (հինգ) տոկոսի չափով գումար՝ որպես կատարողական ծախսի գումար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: AVETISYAN HOVHANNES 3905890216 Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հուլիսի 15

ք.Վանաձոր